ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9. 1960 Общественные науки

Հ. Մ. Ղազարյան

# ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ «ՍԵՎ ԼԵՌԻՆ ՄԱՐԴԸ» ՎԵՊԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Մ. Մամուրյանը XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական մտքի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում։ Նա գրող էր, խմբագիր, հրապարակախոս, թատերագետ, լեզվաբան, թարգմանիչ, բանաստեղծ, մանկավարժ, ամենաէականը՝ հասարակական գործիչ և հայ ժողովրդի ազատագրական պայքարի անվեհեր զինվոր։ Իրավացի էր Ա. Արփիարյանը, երբ գրում էր. «Մեր մատենագրության և օրագրության պատմությունը ընդարձակ ուսումնասիրությանց գլուխներ կվերապահեն Մ. Մամուրյանին»։ Մեր նպատակն է, այս հոդվածում, համառոտակի բնութագրել միայն նրա գրական ստեղծագործության գլուխգործոցը՝ «Սև լեռին մարդը» պատմա-հրապարակախոսական բնույթի վեպը։*

* * *

*Հայ գրականագիտությունը XIX դարի հայ պատմավիպասանության ներկայացուցիչներ սովորաբար համարել է Բաֆֆուն և Մուրացանին արևելահայ գրականության մեջ, Մերենցին՝ արևմտահայ իրականության մեջ։ Բոլորովին աչքաթող է արվել Մ. Մամուրյանի գրական ժառանգությունը, մասնավորապես մեր գրականության ուշագրավ նմուշներից մեկը «Սև լեռին մարդը» պատմավեպը։*

*1880-ական թվականների սկզբից քաղաքական ռեակցիան ուժեղ թափով մոլեգնում էր ցարական Ռուսաստանում, առավել ևս սուլթանական Թուրքիայում։ Համիդյան ռեժիմը պատնեշ էր դնում ազատ մտածողների առաջ, արգելափակում նրանց ուղին, ստիպում նահանջել 1860-ական թվականներին գրված դեմոկրատական դիրքերից։ «Փոթորկի և գրոհի» ներկայացուցիչ մտավորականներից շատերը չափավորում են իրենց պահանջները և թեքվում լիբերալիզմի և պահպանողականության կողմը։ Մամուրյանը մեկն էր այն ըմբոստ մտավորականներից, որոնք չկամենալով հարմարվել նոր պայմաններին՝ ելք էին փնտրում։ 1880 թ. նա գրում էր. «Բռնական իշխանությանց մեջ՝ խմբագիր մը տեսակ մը որովայնախոս պարտի լինել, որ առանց օձիքը ձեռք տալու ձայն լսելի ընելու հնար գիտնա»[1]։*

*Վիպասաններից շատերը ստիպված են լինում հայացքը թեքել դեպի պատմական անցյալը, գեղարվեստորեն վերարտադրել առանձին դեպքերի, ապրումների պատմությունը և այդ ֆոնի վրա ներկայացնել իրենց ձգտումներն ու ծրագրերը՝ մասնավորապես հայ ժողովրդի ազատագրության վերաբերյալ։ Հրապարակ են իջնում Բաֆֆու և Մերենցի պատմավեպերը։ Այդ*

[1] «Արևելյան մամուլ», 1880, № 5, էջ 60։

շրջանում էր, որ լույս տեսավ նաև «Սև լեռին մարդը» վեպը, Մ. Մամուրյանի գրական «որովայնախոսության» ամենանշանավոր գործը։

«Սև լեռին մարդը» վեպի շարադրման աշխատանքը սկսվել էր 1871 թվականից՝ «Արևելյան մամուլը» պարբերականի հիմնադրման առաջին իսկ օրերից։ Վեպի առաջին և երկրորդ մասերը 1871—1880 թվականներին հատվածաբար հրապարակվեցին նույն պարբերականի էջերում։ Թուրք ռեակցիոն գրաքննչությունը սկզբից ևեթ ուշադրության առավ հեղինակի գործը։ Հայ պահպանողականների դրդմամբ Մամուրյանի ցենզորները պահանջում էին փոխել «Սև լեռին մարդը» վեպի մերթ այս, մերթ այն մասերը։ Այդ ի նկատի ուներ հեղինակը, երբ գրում էր. «Ես ալ լոկ բառ մը փոխելով կըսեմ այժմ, պետք է որ տպագրական օրինաց շրջանակը լայնանա, թե ոչ գրիչս կկոտրեմ։ Որո՞ւ փույթն, կոտրե, կփսփսա ականջիս մեկը»[2]։ Ցարական գրաքննչությունը, և հատկապես արևելահայ պահպանողականները ևս երկնչելով վեպում արծարծված մտքերից, սևացնում էին, կամ կտրում հանում «Արևելյան մամուլի» այն էջերը, որտեղ տպագրված էին «Սև լեռին մարդը» վեպի հատվածները։

Չնայած այս հետապնդումներին, Մ. Մամուրյանը առանց տող անգամ փոխելու 1883 թվականին ավարտեց «Սև լեռին մարդը» վեպի առաջին և երկրորդ մասերի ամբողջական բնագրի հրատարակությունը։ Հրատարակությունից անմիջապես հետո նրա վրա հարձակվեցին արևելահայ ու արևմտահայ պահպանողականները, և այդ պատճառով վեպը անավարտ մնաց։ Հեղինակը հնարավորություն չունեցավ գրելու և հրատարակելու վեպի երրորդ և եզրափակիչ մասը։ Այդուհանդերձ մեզ հասած վիճակով անգամ Մամուրյանի այս գործը իրենից ներկայացնում է գեղարվեստական և հասարակական-քաղաքական որոշակի արժեք։

Վեպի թեման վերցված է XIX դարի առաջին կեսի ռուս-պարսկական պատերազմի, հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմությունից։ Պատմական ֆոնը հետևյալն է. 1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ վճռվում էր հայ ժողովրդի պատմական բախտը։ Ռուսական բանակը հայ կամավորական զնդի և ողջ ժողովրդի աջակցությամբ գրավել էր Երևանը, Նախիջևանը և սրընթաց շարժվում էր դեպի Թավրիզ։ Պարսկական Ֆաթ-Ալի շահի որդի Աբբաս Միրզան իրար հետևից տանով էր տալիս ճակատամարտերը։ Ազատագրվում էր ողջ Արևելյան Հայաստանը։

Ռուս-պարսկական պատերազմում Ռուսաստանի հաղթանակին նկատելիորեն օժանդակում էր և այն, որ հայ ազգաբնակչությունը գրկաբաց էր ընդունում ռուսական բանակին՝ նրան ցույց տալով ոչ միայն նյութական, այլ նաև ռազմական ու քաղաքական օգնություն։ Ներսես Աշտարակեցու, Հ. Ալամդարյանի և այլոց ջանքերով կամավորական ջոկատներ էին կազմակերպվում Թիֆլիսում, բուն Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Պարսկաստանում եղած հայ գաղթավայրերում, մասնավորապես Թավրիզում։

Վեպի գլխավոր հերոս Ռշտենց Զորան Վանա լճի մերձակա Քարդաշ գյուղից է։ Դրդերի հարձակումներից, թալանից ու ճնշումներից ձանձրացած Զորան լքում է հայրենի կալվածները, մեկնում Ատրպատականի Թավրիզ քաղաք և զբաղվում առևտրով։ Կարճ ժամանակից հետո նա մեծ հարստություն է դիզում և պատրաստվում «ռազմական կամ քաղաքական» ասպարեզ մտնելու։

[2] Նույն տեղում, 1873, № 1, էջ 57։

Առիթը անմիջապես ներկայանում է։ Ներսեսի կոչերը հասնում են Թավրիզ և ոտքի հանում շատ հայերի, այդ թվում և Ռշտենց Զորային։ Կազմվում է նրա կամավորական ջոկատը, որը անցնում է ռուսական սահմանը և միանում հայ կամավորական գնդին։ Զորայի ջոկատի և Սասունի լեռնականների ուժերով ազատագրվում են Երնջակ բերդը, Խաբան ու Գողթն գավառները, Սյունիքի Բաղաբերդը, որին հեղինակը վերագրում է ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն՝ Պարսկաստանին դիմակայելու գործում և որը վեպում ստացել է Սև լեռ անունը։

Հեղինակը վառ գույներով է ներկայացնում հայերի ռուսական օրիենտացիան, բազմաթիվ էջերում նկարագրում, թե ինչպես հայ ժողովրդի հասարակական տարբեր խմբեր ու դասեր գրկաբաց էին ընդունում ռուսական զինվորներին, դիմավորում նրանց իբրև իրենց ազատարարների։ «Հայերը,— գրում է Մ. Մամուրյանը,—ցորենն ու ալյուրը, արյունն ու կյանքը չէին խնայեր օտար զինվորներուն, որ իբրև փրկության հրեշտակ իրեն կներկայանար... Հայ քաղաքացին իր տունը, մեծատունն իր գանձը, գյուղացին իր կալն ու կալորայն, կրոնավորն իր վանքը, պատանին իր հոգին, լեռնականն իր բազուկները կբանար ռուսաց առջև ու իբրև ազատարար զանոնք կընդուներ»[3]։ Պարսկական կրնկի տակ հեծող հայ մշակները, արհեստավորները նույնիսկ եկեղեցական դասը, «...ընտանեասեր կանայք, որ իրենց երեսը դաժան բռնավորներե կպահեին հանկարծ օր տեսան, երևան ելան և ազգային այս մեծ դատին մասնակից դարձան»։ Ռուսական բանակի առաջընթացի պահին. «Մշակն իր մանգաղը շարժեց, դարբինը իր կռանը, վաճառականն իր տումարը, վանականն իր խաչը առավ, պատանին իր նժույգն ու սուրը, կինն իր ասեղը, վիպասանն իր վին և կարծես թե հրաշքով՝ բերդ, զենք, մթերք հայոց շուկաներն ու հրապարակն առատորեն թափեցան, միություն, սեր ու արիություն ամեն հոգիները վարակեցին, մարտական գեղահույս դրոշակներ և երգեր ամեն հոգի բորբոքեցին»[4]։

1826—28 թվականների ռուս-պարսկական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով։ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին։ Կատարվեց հայ ժողովրդի դարավոր բաղձանքը։ Նա ազատվեց ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգից և ընկավ զարգացման անհամեմատ բարձր մակարդակի վրա կանգնած Ռուսաստանի տիրապետության տակ։ Հայ ժողովուրդը կապվեց ռուս ժողովրդի հետ, հաղորդակից դարձավ նրա առաջավոր կուլտուրային, միացավ նրա ռևոլյուցիոն շարժմանը։ Բարձր գնահատելով Ռուսաստանի կատարած առաջավոր դերը հայերի նկատմամբ, չպետք է մոռանալ Վ. Ի. Լենինի ասույթները երկու Ռուսաստանի մասին։ Իրոք Արևելյան Հայաստանը կրեց ցարիզմի գաղութային քաղաքականության ծանր լուծը։ Այդ քաղաքականությունը առավելապես ուժեղացավ 80-ական թվականներին, երբ սկսեցին փակել հայկական դպրոցները և փականքի տակ դրվեց ազատ խոսքն ու մամուլը։

1878 թ. Բեռլինի կոնգրեսը իր պաշտպանության տակ առավ «հնամաշ դիպլոմատիկական լաթը»՝ Թուրքիայի անբաժանելիության սկզբունքը։ Արևմտահայությունը ոչինչ չշահեց պետությունների խոստացած ռեֆորմների հեռանկարից։ Ընդհակառակը, ռեֆորմների հեռանկարը դուռ բացեց արևմտա-

[3] Սև լեռին մարդը, 1932, Աթենք, էջ 124։
[4] Նույն տեղում։

հայ հատվածի համար սկսված նորանոր հալածանքների առաջ։ Ավելի վատթարացավ արևմտահայերի վիճակը, քան էր մինչև ռուս-թուրքական պատերազմի շրջանը։ Համիդականները, գազազած հայերի ռուսական օրիենտացիայից, սկսեցին դաժան դատաստան տեսնել արևմտահայերի հետ։ Բանտ, աքսոր, մահապատիժ էր սպառնում ամեն մի ազատ մտածողի։

Այսպիսին էր հայերի վիճակը, երբ հրապարակվեց «Սև լեռին մարդը» վեպը։ Բնական է. Մ. Մամուրյանը ապրելով թուրքական պետության մեջ, միշտ իր գլխին կախված տեսնելով սուլթանական դամոկլյան սուրը, չէր կարող համարձակորեն քննադատել ու մերկացնել այդ կարգերը։ Որչափ վեպի նյութը ընդգրկում էր Արևելյան Հայաստանը, հեղինակը իր քննադատության սլաքները ուղղում է ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ, նշավակում նրա վերաբերմունքը ծայրամասային ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ։ Սակայն չմոռանանք նաև ասելու, որ հեղինակի գրչի տակ ցարիզմը ճաճախ շիրմա էր դառնում՝ սուլթանական կարգերը քննադատելու համար։

«Սև լեռին մարդը» վեպում գործող անձինք, Մ. Մամուրյանի ստեղծած հերոսները, ռուսական դրոշի ներքո կռվող «ուխտի զինվորները» տեսնելով, որ Նիկոլայ I-ը և Պասկևիչը դրժում են իրենց խոստումը, մերժում են հայերին «խոստացած ինքնավարությունը», Ներսես Աշտարակեցու խորհրդով ու գրբգմամբ ապստամբում են Պասկեիչի զորախմբի դեմ, գրավում Սյունիքի Բազաբերդը և ամրանում այնտեղ։ Ռուսական բանակը մի քանի գրոհներից հետո գրավում է Բազաբերդը, ոչնչացնում ապստամբներից ոմանց, իսկ նրանց ղեկավար Զորային շղթայում ու նետում հենց նույն ամրոցում եղած բանտը։ Ապստամբներից շատերը ցրվում են Հայաստանով մեկ և ձգտում ազատել իրենց ղեկավար Զորային։ Նրանց հաջողվում է բանտում տեղավորել Զորայի կնոջ՝ Նվարդին, և մեկ տարուց հետո ծնվում է մի տղա, Վարուժանը՝ Սև լեռին մարդը՝ Մամուրյանի այն նոր հերոսը, որը Հայաստանը և Վրաստանը պետք է ազատագրեր զինված պայքարի միջոցով։

Այստեղ պետք է նկատել, որ արևելահայերի ազգային ազատագրական շարժումները Մամուրյանը մատուցում էր պատմականորեն անիրական և հակապատմական շրջանակների մեջ։ Ճիշտ է, որ ցարիզմի հալածական քաղաքականությունը ծայր էր առնում արդեն իսկ XIX դարի 30-ական թվականներին, սակայն հայերի ռեակցիան դրա դեմ սկսվեց անհամեմատ ավելի ուշ։ Բազաբերդի ապստամբությունը հեղինակի երևակայության արդյունքն է սոսկ, և այստեղից էլ ծնունդ են առնում նաև Մամուրյանի թույլ տված քաղաքական վրիպումները։

Վեպի երկրորդ մասում արդեն որոշակիորեն զգացվում է Մամուրյանի թունոտ ատելությունը միապետական Ռուսաստանի նկատմամբ։ Քննադատելով ցարիզմի ներքին և արտաքին քաղաքականությունը, հաճախ նա ծայրահեղության մեջ է ընկնում, անտեսում Ռուսաստանի կատարած պրոգրեսիվ գերը հենց Հայաստանի նկատմամբ։ Այնտեղ է հասնում, որ քաղաքականապես ապակողմնորոշում է ընթերցողին և անտեսելով բոլոր դրականը, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարում է սխալ։

Ցարիզմի նկատմամբ Մամուրյանի ատելությունը, բացի հայերի «ազգային շահերից» ուներ նաև այլ պատճառներ։ Վիպասանը գտնում էր, որ Եվրոպայում նրբեք ռևոլյուցիոն շարժումները հաղթանակով չեն կարող պսակվել,

քանի գոյություն ունի ցարական մոնարխիան։ «Եվրոպան շրջանավոր քաղաքական ու տնտեսական փոթորիկներու դատապարտված է, Եվրոպա, աշխարհիս ամենեն լուսավոր համարված մասը, ընկերային հրատապ խնդիրներով տագնապելու ատեն՝ կտագնապի քաղաքական ահարկու սրով մը, զոր Ռուսիա Տոմոկլեսի սուրին պես, իր գլխեն կախված է,— գրում է Մամուրյանը»[5] կամ «Ռուսիան կգործե և պիտի գործե միշտ Եվրոպայի դեմ, որպեսզի ժողովուրդները ժամանակ չունենան իրենց բուն շահերը մտածելու, համերաշխական իրավունք և պարտավորություն ճանչնալու և ամեն բռնակալության դեմ միահամուռ կանգնելու»[6]:

Քննադատելով ռուսական ցարիզմը, համակրանք արտահայտելով Եվրոպայի մասին, Մամուրյանը մտադրություն չուներ ստանձնելու արևմտա-եվրոպական մեծ պետություններին ցարիզմի դեմ պաշտպանելու հոգսը։ Ժողովուրդների իրավունքների պաշտպանության դիրքերից նա քննադատում էր նաև եվրոպական մեծ պետությունների երկդիմի քաղաքականությունը, ցույց տալիս, որ նրանք պաշտպանում են ազգությունների ազատության սկզբունքը սոսկ արտաքնապես, մինչդեռ իրականում դեմ են ամեն մի ազատագրական ու ռևոլյուցիոն շարժման։ Մամուրյանը գիտեր անշուշտ, որ Ռուսաստանի կամ Ավստրիայի դեմ Նապոլեոն 3-րդը առաջ էր քաշում ազգությունների սկզբունքը սոսկ ֆրանսիական բուրժուազիայի և բոնապարտիստական դիկտատուրայի դիրքերն ամրապնդելու եսակենտրոն, նվաճողական քաղաքականությունից ելնելով։ Կասկած չկա, որ Զեյթունի ապստամբության ժամանակ բոնապարտիստների վարած քաղաքականության փորձից որոշ դասեր էր առել նաև հայ հրապարակախոս և վիպագիր Մամուրյանը։ Ապարդյուն չէին եղել նրա համար սաս Բեռլինի վեհաժողովի դասերը, ուր բացահայտվեց անգլիական իմպերիալիզմի երկդիմի նկարագիրը։ «Մեծ պետությանց մեջ,— գրում է Մամուրյանը,—ազգերը դեռ իրենց ճակատագրի տերը չեն և կենոռոտ քաղաքականության մը ծուղակն ընկած են»[7]:

1880-ական թվականներին ևս Մամուրյանը բացասաբար էր արտահայտվում եվրոպական պետությունների կառավարող շրջանների մասին, որոնք ժողովուրդներին պատրանքների մեջ պահելով, կողոպտում էին նրանց ունեցվածքը, ոչնչացնում փոքր ազգերի անկախությունը, պատերազմում մեկը մյուսի դեմ, միլիոնավոր առողջ և կորովի մարդկանց զրկում աշխատանքից և զորակոչելով բանակ, սպառազինում և ապա սպառնում թույլ մրցակիցներին։ Մամուրյանի կարծիքով, եթե այդ ռազմական ծախսերը ներդրվեին երկրի տնտեսության մեջ, իրոք որ ժողովուրդները կկարողանային բարվոքել իրենց դրությունը, մինչդեռ թույլ կամ փոքր ազգերը կազատվեին եվրոպական գաղութարարների երկաթյա մագիլներից։ «Եվ սակայն որքան պիտի թեթևանային շատ ընկերային աղետներ ու ոճիրներ,— գրում է Մ. Մամուրյանը,— եթե Եվրոպա ընդհանրապես իր ներքին բարեկարգության խնդիրներով զբաղվեր, քան թե արտաքին բախտախնդիր և անկուշտ քաղաքականության հոգերով, եթե հեռավոր ձեռնարկությանց համար սպառած գանձերու մի մասը միայն ընկերային, կրթական և ճարտարապետական նպատակներու համար գործածեր, եթե ստեպ

---

[5] Նույն տեղում, էջ 164։
[6] Նույն տեղում, էջ 165։
[7] «Արևելյան մամուլ», 1876, հունվար, էջ 28։

իր դավանած և քարոզած գիտության սկզբանց անհավատարիմ, անհավատարիմ չգտնվեր նաև բարոյական սկզբանց և քաղաքականության շահերու պատրվակավ անմեղ ժողովուրդներ չվրդովեր՝ չջնջեր, օտարներու հայրենիք չհափշտակեր և նուրբ դիվանագիտության ոգին տակ բարբարոսության գործեր չկատարեր: *Եվ երբ անտարբերություն կեղծելով այն ընկերական հրատապ խնդիրներուն հնոցին առջև, որ շարունակ կեռա ու կմխա, տերություններն ահավոր բանակներ կպահեն կանգուն, առասպելական տուրքեր կգանձեն անդուլ, հեռավոր արշավանքներ կկազմեն շարունակ՝ գաղթականության և վաճառականության սահմանները ընդարձակելու փառամոլությամբ։*

Ո՞վ կվնասե իր արյունովն ու դրամովը ազգաց օրինաց բռնաբարման համար, եթե ոչ ժողովուրդն, որ սակայն այնքան ստիպողական ներքին պետքեր ունի հոգալու, այնքան տնտեսական, քաղաքական պահանջներ ունի կատարված տեսնելու»[8]:

*Հրապարակախոսը քննադատական կրակ էր տեղում Անգլիայի գլխին, որը գաղութացրել էր հնդիկ ժողովրդին, ստրկացրել աֆրիկական ու Ավստրալիայի մի շարք ցեղերի ու ժողովուրդների, հայ ժողովրդի արյան գնով Թուրքիայից զավթել Կիպրոս կղզին, իր ազդեցության տակ պահել Թուրքիան, Պարսկաստանը, Աֆղանստանը և Արևելքի այլ երկրներ։ Անառարկելի է, որ Մամուրյանը մի պահ տարվել էր Անգլիայով, կարծելով, թե նա կարող է ազդել ինչպես Թուրքիայի, այնպես էլ Բեռլինի 1878 թ. կոնգրեսին մասնակից եվրոպական մեծ պետությունների դեսպանների վրա և հայ ժողովրդին, այսպես կոչված, «ինքնօրենություն տալ»։ Կոնգրեսից հետո Մամուրյանը Անգլիայից պահանջում էր կատարել իր ստանձնած պարտականությունները՝ ստիպել Թուրքիային, որպեսզի հայկական վիլայեթներում խոստացած ռեֆորմները կենսագործվեն, հայերը փրկվեն Թուրքական, ինչպես նաև քրդերի ու չերքեզ աղաների ու բեկերի հարստահարություններից։ Կարճատև եղավ այդ պատրանքը։*

*Դեռևս ռուս-Թուրքական 1877—1878 թթ. պատերազմի նախօրյակին, Մամուրյանը ճիշտ էր հասկացել Անգլիայի դիտավորությունները «Արևելյան հարցի» համար մղվող պայքարում։ Պատերազմի սկզբում Մամուրյանը գրում էր. «Անկլիո քաղաքականությունը, ի՞նչ է, պատերազմին սկզբեն անոր հետևած գիծը կփնտռեմ ու չեմ գտներ, թերևս շատ նուրբ կամ երկդիմի է։—Հարմանք, դեռ չգիտե՞ս, որ չեզոքության քաղաքականություն է։— Սխալ է. Ալաշկերտի, Պայազիտի, Վանա գյուղերից ավերակները ձեր գործերն են»։*

*Ակներև է, որ հրապարակախոսը կոնգրեսից առաջ էլ գիտեր, որ Անգլիան հայերի համար ոչինչ անել չի ուզում և ինչ էլ որ թմբկահարում է, ելնում է միայն իր կառավարության տնտեսական ու քաղաքական շահերից։*

*«Արմենն (հայը) և ֆիրմեն (անգլիացին)» վերնագրված դիալոգի բնույթ կրող հատվածում Մամուրյանը դիմազերծ էր անում «քրիստոնյա Անգլիային», բացահայտում նրա ողջ ծրագրերը, ցույց տալիս նրա թաքուն նպատակները, որոնցից դրված միայն վերջինս պաշտպան է կանգնում հայ ժողովրդին։ «Իբրև քրիստոնյա՝ կհարցնեմ և ես քրիստոնեիդ... գո՞հ ես պատերազմի բռնած ընթացքեն, գո՞հ է Անկլիա մեզի հասած աղետներեն, գո՞հ է Եվրոպա մարդկության դեմ գործած ոճիրներեն։ Մինչև ե՞րբ Անկլիա լուռ կմնա։— Որչափ ատեն որ անգլիական շահերը անվնաս մնան, պատասխանում է անգլիացին։ Ուրեմն*

[8] Նույն տեղում, 1885, հունվար, էջ 19—20։

քաղաքակրթության, ազատության ու մարդկության շահերը ձերիներուն հակառակ են։ Անգլիացին ասում է. Հնդկաստան, Շուեշ (Սուեզի ջրանցք—Հ. Ղ.), Տարտանել, Կ. Պոլիս, ահա մեր շահերու առանցքը։—Բայց ազգություններ պիտի՞ ջնջվին։ — Մեզի փույթ չէ, քանի որ մեր շահերուն դպչող չկա»[9]։ Մամուրյանը գտնում է, որ «Անկլիա Ասիո քրիստոնյա ժողովուրդները և մասնավորապես հայերը պաշտպանելու շահ չունի»[10]։

Բեռլինի կոնգրեսի որոշումների առիթով Մամուրյանը բողոքում է, թե Թուրքիան հապաղում է հայերին ռեֆորմներ տալ, և «այս հապաղումը Ֆրանսիո և Անկլիո պարգևն է մեզի, որոնք կարծես թե ի վերուստ սահմանված են Արևելքը խաղացնել... և արդարև այդ արևմտյան բարեկամության միջնորդությունը Ալեքսանդրիո ռմբակոծությամբ կսկսի և Եգիպտոսի գրավմամբ կվերջանա»։ Մամուրյանը մերկացնում էր Անգլիայի վարած քաղաքականությունը հենց անգլիացիների, ավելի ճիշտ իռլանդացիների նկատմամբ։ «Իռլանդացիք՝ ագարակային օրինաց օգուտները անբավարար համարելով՝ միշտ կբողոքեն Անկլիո բռնակալության դեմ և պ. Բառնելի առաջնորդությամբ իրենց անկախության խորհուրդները կմտածեն»[11]։

Մ. Մամուրյանի ինչպես «Սև լեռին մարդը» վեպից, այնպես էլ նրանից առաջ ու նրանից հետո հրապարակված հոդվածներից ակնհայտ է, որ հեղինակը բացասաբար էր տրամադրված «ժամանակի Եվրոպայի և Ամերիկայի այսպես կոչված» առաջավոր պետությունների վարած ներքին և արտաքին քաղաքականության հանդեպ։ Բոլոր դեպքերում նրա համակրանքը ժողովուրդների կողմն է, այն ժողովուրդների, որոնք հարստահարվում են, ճնշվում՝ աշխարհում մինչ այդ եղած ամեն տիպի կառավարող շրջանների կողմից. դա լիներ ռեսպուբլիկական Ֆրանսիան, թե սահմանադրական Անգլիան, «ռամկավարական» Ամերիկան, թե «համայնավարական» Շվեյցարիան։ «Ոչ միայն հին, այլև ժամանակակից պատմության մեջ կտեսնենք,—գրում է Մամուրյանը,— թե քանի քանի ժողովուրդներ ու ազգեր, թեև մեծագույն ազատության և ինքնուրույնության ընդունակ, իշխանական ծանր գավազանի ներքև ճնշված են և դեռևս կճնշվեն... Այդ ժողովուրդները գրեթե բոլորովին անազատ են իրենց միջազգային հարաբերությունները ըստ հաճույս տնօրինելու»[12]։

«Երբ մերթ ընդ մերթ ժողովուրդ մը հեղափոխի,— գրում է Մամուրյանը,— անոր բերանը՝ զիջումներու անվամբ՝ շաքարի կտոր մը կդնեն, որպեսզի հանդարտի, ինչպես լալկան տղու մը բերանը. երբ ազգերն ինքնահորդոր կամ արտաքին ազդեցությամբ ընդվզին իրենց բնիկ կառավարությանց դեմ, իսկույն ուրիշ տերություններ մեջ կմտնին, ամենե հանդուգն ու ավելի պաշտպան ունեցող ժողովրդյան ինքնօրենություն. հող կնծայեն և այս ամենը միջազգային դաշնագրությամբ մը պսակելով, կկարծեն, թե աշխարհի խաղաղությունը վերահաստատած են, շատ ժողովրդոց վերքերը բուժած եղան, թեև իրոք միայն նոր-նոր չարիք բերած, հասուցած են այն ժողովրդոց, որ օրինավոր ճամբով արդարության և ճշմարտության հասնելու դեռևս հույս կտածեին։ Ահա այդպիսի արիության և բժշկության փորձ զգաց մանավանդ Պեռլինի վեհաժողովն, երբ

[9] Նույն տեղում, 1877, էջ 257։
[10] Նույն տեղում. էջ 104։
[11] Նույն տեղում. 1883. էջ 105։
[12] Նույն տեղում, 1881 էջ 12։

Արևելքի մեջ ծագած ահագին ընկերային հրգեհը մի քանի հոդվածներով մարելու ելավ»[13]։

Այսպիսով, ասիական երկրներից պարսկական, թուրքական և հրապարակախոսի դասակարգումով ռուսական-ցարական-միապետական կարգերի քննադատության կողքին, ընթերցողը նրա մոտ հանդիպում է նաև եվրոպական այսպես կոչված հանրապետական կարգերի քննադատությանը։ Բոլոր դեպքերում Մամուրյանը քննադատում էր պետական այդ կարգերը ոչ թե լիբերալ ռեֆորմների սպեղանիով բուժելու նպատակով, այլ դրանք ոչնչացնելու և նոր ավելի կատարյալ ու ժողովրդական պետական ձև ստեղծելու պատրանքով։

Մամուրյանը ժողովուրդների իրավունքների պաշտպան էր, մինչ այդ եղած պետական ձևերի թշնամի։ Նա եվրոպական ժողովուրդների քաղաքական շահերը չէր բաժանում ասիական ժողովուրդների շահերից, այդ թվում հայ ազատագրական շարժումների հաղթանակի հեռանկարները նշմարում էր ժողովուրդների համընդհանուր զինված պայքարից հետո ձեռք բերվելիք հաղթանակի հորիզոնների մեջ։ Մամուրյանի գաղափարախոսությունը այս վեպում և ընդհանրապես զերծ էր ինքնաբավ ու եսակենտրոն նացիոնալիզմից։ Վեպի մեջ հեղինակը արծարծում է աշխատավոր մարդկության ռևոլյուցիոն համընդհանուր պայքարի գաղափար, պայքար, որը պետք է պատմության աղբակույտը նետեր տիրապետող վերնախավերին և նրանց սպասարկող պետականության հնամաշ ձևերը։

«Պետությունները այսօր մեծ, հզոր հաղթական են, վաղը փոքր տկար և անհետ կդառնան, իսկ որ մինակ անիրավության և բռնության կծառայեն՝ օրին մեկն իսպառ պիտի ջնջվին և նոր առույգ և լուսամիտ սերունդի մը տեղի պիտի տան»,— գրում է Մամուրյանը։ Դեմոկրատական այս ուտոպիան է, ահա, կազմում քննարկվող վեպի գաղափարական առանցքը։

Մ. Մամուրյանը մեկընդմիշտ դեմ է եղել պետությունների այն քաղաքականությանը, որոնք տերիտորիաներ նվաճելու, վաճառահանման շուկաներ ունենալու, զարգացող արդյունաբերությունը անհրաժեշտ բանվորական ուժով ապահովելու նպատակներով գերեվարում էին ժողովուրդներին, շահի ակնկալությամբ միլիոնավոր անմեղ մարդկանց արյուն թափում։ Այդ պատերազմները անարդարացի պատերազմներ էին և մերժվում էին հրապարակախոսի կողմից։ Սակայն կային և արդարացի պատերազմներ, ազգային ազատագրական և ռևոլյուցիոն շարժումներ, որոնք ազատություն էին բերում ճնշված մարդկությանը և դրվատվում էին Մամուրյանի կողմից։ «Այց կա արդար և կա անիրավ պատերազմ,—գրում է Մամուրյանը,—երբ իբրև ծայրագույն դարման ընդունվի այդ պատուհասը, երբ մարդկային իրավանց և արդարության իբրև վահան նկատվի այն (*անարդարացի պատերազմը—Հ. Ղ.*), ո՞ւր է այդ իրավունքը, ո՞ւր արդարությունը»[14]։

Անարդարացի պատերազմներին հակադրելով ժողովրդական ռևոլյուցիան, քննադատելով լիբերալ ռեֆորմիստների «խաղաղասիրական քարոզները», Մ. Մամուրյանը գրում էր. «Խաղաղասիրական միջոցներով արդարության ու ազատության հաղթանակներ տանելու ժամը չէ հասած տակավին, ըստ մեզ քանի որ դեռ կան ազգեր ու կտառապեն բռնակալության և անիրավության

[13] Նույն տեղում, 1881, էջ 13։
[14] Նույն տեղում, 1877, էջ 257։

երեսեն, կան ազգեր, որ բռնազբոսիկ խավարի ու տգիտության մեջ կմաշին, կան ազգեր, որոնց ակներև իրավունքն ու շահերը ոտնահար կմնան։ Հետևապես՝ ինչ–որ իրավագիտությունն, ինչ որ միջազգային արդար օրենքն, ինչ որ մարդասիրությունն, ինչ որ գիտությունն ու լուսավորությունը չեն կարող վճռել անցյալ այլ կենդանի ազգերու ճակատագրին նկատմամբ, զենքը պիտի վճռե, և երբ զենքն արդար դատի և իրավունքի համար կշռողա ազգերու ձեռքն, այդ զենքն հառաջադիմության և քաղաքականության սատարող անհրաժեշտ, հզոր ու օրենյալ գործի մը կդառնա»[15]:

Ակնհայտ է, որ Մամուրյանը ճիշտ է, ոչ շատ հստակ ձևով, բայց և այնպես մերժենում ու հանգում էր եվրոպական ու ասիական ժողովուրդների ռևոլյուցիոն համընդհանուր պայքարի գաղափարին։ Ըստ Մամուրյանի եվրոպական ժողովուրդներն այդ պայքարին պատրաստ են, ուստի հարկավոր է ոչ միայն վերացնել ցարական բանակի վտանգը Եվրոպայի ռևոլյուցիաների համար, այլ ռուս ժողովրդին ևս նախապատրաստել պետություններին ու կառավարողներին սպասող «ահեղ դատաստանին»:

Քննադատելով ցարիզմի ազգային և գաղութային քաղաքականությունը, Մամուրյանը մոռացության չէր տալիս ռուս ժողովրդին, նրա կատարած պրոգրեսիվ դերը Արևելքի ժողովուրդների նկատմամբ։ Նա ճիշտ կերպով տարաբաժանում էր ռուս ժողովրդի շահերը ցարիզմի շահերից ու հավատում այդ մեծ ազգի փայլուն ապագային։ Մամուրյանը մեկն էր XIX դարի այն մտածողներից, որոնք տեսնում էին ոչ թե մի, այլ երկու Ռուսաստան։ «Ռուսիա նոր մե,— գրում է Մամուրյանը,— որմե պիտի ծնի Որմիզդ և Արհմն։ Բայց Ռուսիա բուն կառավարությունը չէ, կառավարություն մը պատահական կամ ժամանակի ու ժողովրդյան ճանցամանաց արդյունքն է, որ ժողովրդյան հառաջադիմության ու ժամանակի հետ կայլափոխի»։ Իսկ ցարիզմի մասին գրում էր. «Արդ Ռուսիա (ցարիզմը — Հ. Դ.) ներկայիս մեջ զենքով չընկճիր, զի զենքն իր արվեստն է, հրդեհելը իր փրկությունը, շղթայելն իր ապահովությունը։ Մարդկային կոշտ մարմիններ կնետե պատերազմի ասպարեզը, վասնզի իրեն համար ճատրակի մը քարերուն չափ արժեք չունին այդ անոգի մարմինները»[16]։

Մի կարևոր հանգամանք ևս։ Մ. Մամուրյանի այս վեպում ցցուն կերպով լցացվում է Մ. Նալբանդյանի ծրագրերի, ըմբռնումների ու արծարծած հեռանկարների ազդեցությունը, մասնավորապես Ռուսաստանի ապագային վերաբերող նրա մարգարեական շնչի արգասավոր ներգործությունը։ Մամուրյանը պրակտիկ ու գաղափարական սերտ կապերի մեջ է եղել Մ. Նալբանդյանի հետ։ Արևմտահայերից նա միակն էր, որ հասկացավ Նալբանդյանի բանտարկության և աքսորի իսկական պատճառը, այսինքն նրա ունեցած կապերը Լոնդոնի ռևոլյուցիոն վտարանդիների հետ։ Նալբանդյանի բանտարկությունից հետո Մամուրյանը չափազանց բացասաբար տրամադրվեց իրեն գաղափարամերձ ռուսահայ մեծ հրապարակախոսին հալածող ցարիզմի նկատմամբ։ Սիբիրի ձյունածածկ տարածությունները հաճախ սև գույներ են ստանում հրապարակախոսի հոդվածներում։ 1866 թ. նա տպագրում է «Ազատության երգը» բանաստեղծությունը, ապա Նալբանդյանի գերեզմանը պատկերող ձյունածածկ բեմահարթակից արտասանում նրա մարտաշունչ տողերը։ Նալբանդյանը չի մո-

[15] Նույն տեղում, 1880, մարտ, էջ 97։
[16] Սև լեռին մարդը, էջ 165։

ռացված նաև այս վեպում։ Ցարական կառավարությունը ազատության մունետիկների վրա «իր հսկողությունը կկրկնապատկե է երբ կայծ մը անգամ տեղ մը տեսնե,— գրում է Մամուրյանը,— զայն մարելու համար սիպիրյան սառնամանիք անոր վրա կթափե»[17]։ Համակրելով Նալբանդյանի գաղափարները, Մամուրյանը չէր կրկնում դրանք բառացիորեն, այլ յուրովի արծարծում ու զարգացնում էր այնտեղ ամփոփված մի շարք ճշմարտությունները։

«Մև լեռին մարդը» վեպի հեղինակը գտնում էր, որ միայն ցարիզմի տապալումից հետո ռուս ժողովուրդը կվերածնվի. տնտեսապես կզարգանա և ավելի գործունյա կդառնա։ «Եվրոպական տերությունները կամ լավ ևս ըսեմ ժողովուրդները,— գրում է Մ. Մամուրյանը,— այն ժամանակ պիտի հաղթանակեն, երբ որ ստիպեն իրենց կառավարությունները որ անոր (ցարիզմի — Հ. Ղ.) հետ չդաշնակցին, երբ որ անոր ժողովրդյան հետ իրենք նիզակակցին մտապես ու բարոյապես, անդադար լույս սփռելով, գիտություն տարածելով այն մարդկային անապատներու մեջ ուր ավելորդապաշտություն և մոլեռանդություն շարունակ կճարակեն։ Ջատե ռուսերն իրենց գլխեն և մարմինը կվերածնի, ընկերասեր, զվարթ, գործունյա ընտիր ժողովուրդ մը կդառնա»[18]։ Այսպես կարող էր գրել միայն մի հեղինակ, որ մտովին արձագանքում էր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության էջերում արծարծված հեղյուցիոն գաղափարներին։

Ի հակադրություն լիբերալ բուրժուական մտավորականների, որոնք ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ իրականության մեջ Արևմտյան Հայաստանի ազատագրման հույսերը կապում էին ցարիզմի՝ դեպի Թուրքիա կատարած միջամտության հաջողության հետ, Մ. Մամուրյանը յուրովի պաշտպանում էր Մ. Նալբանդյանի ռեոլյուցիոն դեմոկրատական ուղեգիծը։ Հայաստանի ազատագրումը նա տեսնում էր ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի, ցարիզմի տապալման, նոր ժողովրդական կարգերը ստեղծելու հեռանկարների մեջ։

Նալբանդյանական ուղիով ընթանալուց զատ, ի՞նչ կարող էր Մ. Մամուրյանին մղել դեպի ռուսական ռևոլյուցիան, այնքան մանրակրկիտ կերպով ուսումնասիրել նրա հասարակական ու պետական կարգը, տալ հետաքրքիր կռահումներ Ռուսաստանի ապագայի մասին, կռահումներ, որոնք մի քանի տասնամյակ հետո վերածվեցին անջնջելի իրականության։

Մ. Մամուրյանը, դեռևս 1872 թվականին էր նկատել, որ Ռուսաստանում կազմակերպվում են «Նոր Ռուսիա» երազող մարդկանց առանձին խմբակներ։ «Ռուսիո մեջ անգամ,— գրում է նա,— պետության տարբեր նպատակի համար սնուցած համասլավյան քողին տակ՝ ազատամիտ խմբակներ կխլրտեին և նոր Ռուսիա մը կերազեին»[19]։ Տարօրինակ զուգադիպություն, այստեղ Մամուրյանը կարծես թե նկատի ուներ այն, ինչ Մարքսը և Էնգելսը անվանում էին «դեմոկրատական պանսլավիզմ»։ 1875 թ. Մամուրյանը նշմարում էր արդեն, որ գնալով ուժեղանում են ռևոլյուցիոն շարժումները։ «Սակայն այս այտնի է,—գրում է նա,—որ Ռուսիան շրջապատող չինական ամբարտակը՝ լուսո և ազատության դեմ չկրնար հավետ կանգուն մնալ և արդեն խուլ շարժումներ և բուռն դեղեր, ընկերական ծանր հիվանդությանց նշաններ և հեղա-

[17] Նույն տեղում, էջ 44։
[18] Նույն տեղում, էջ 165։
[19] «Արևելյան ժամուլ», 1872, էջ 26։

փոխությանց կարապետներ կերեին...»[20]։ 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, քննադատելով ցարիզմին, Մամուրյանը գրում էր. «Ռուսիա սահման մը ունի ուր կանգ պիտի առնու։ Իր ծոցը կսնուցանե գաղտնի ինչ որ օրին մեկ՝ հալածական ազատությունը, զինք պիտի լափե կործանե և նոր Ռուսիա պիտի ծնե»[12]։

Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանի Անգլիային արած զիջումների պատճառը Մամուրյանը համարում է ռևոլյուցիոն շարժումների ուժեղացումը երկրի ներսում, որը նոր Անգլո-ռուսական պատերազմի ժամանակ կարող էր սրբել ցարական իշխանությունը։ «Կորչագովը պատվով զիջումներ ընելու տրամադիր կերևի,— գրում է նա,— Շուվալոֆը Զարին հետ կտեսնվի և Ռուսիա որչափ անկլիական սպառնալից զորութենե նույնչափ ներքին հեղափոխական թագուն շարժումներե կերկնչի։ Արդարև՝ նոր անկլո-ռուսական պատերազմ մը կրնար ներքին ընկերական հեղափոխություն մը բերել, և ընդհանուր քաղաքական փոթորիկ մը հարուցանել Հյուսիսային պետության մեջ, կայսերական գահը վտանգի մեջ դնելով»[22]։

1880 թ. Անգլիայում ուժեղանում էր ֆենիների շարժումը։ Մամուրյանը գտնում էր, որ Բրիտանական պետությունը պետք է Իռլանդիային ազատություն տա, այլապես ժողովուրդը կվճռի իր բախտը, կնախապատրաստի ռևոլյուցիոն պայքարի, կանխապես կզինվի այնպես... «ինչպես Ռուսիան, որի ժողովուրդն ու կառավարությունը իրար դեմ զինված կսպասեն»[23]։ Կգա օրը, երբ այդ սենքերը «գործի կդրվեն և ժողովուրդը կհասնի յուր բաղձանքին՝ ընկերային ազատության»։ Ռուսական ռևոլյուցիայի և Ռուսաստանի ապագայի ճշգրիտ կանխորոշումը տրվեց «Սև լեռին մարդը» վեպի երկրորդ մասում, որը մինչև օրս էլ մնացել է անծանոթ գավառ հայ բանասիրության համար։

«Սև լեռին մարդը» վեպի երկրորդ մասում Մ. Մամուրյանը զարգացնելով Մ. Նալբանդյանի գիծը, կես դար առաջ գիտական կանխատեսությամբ կարողացավ տեսնել ռուսական հեռավոր ռևոլյուցիան, որի հաղթանակից հետո կստեղծվեր փայլուն ապագա ոչ միայն ռուսների, այլ նաև ցարական Ռուսաստանի տիրապետության տակ հեծող մյուս բոլոր ժողովուրդների համար։ Նրա կարծիքով այդ ռևոլյուցիայից հետո կստեղծվեր նոր Ռուսաստան, որի կազմում մտնող ժողովուրդները ազատ լինելով սոցիալ-քաղաքական բոլոր տիպի ճնշումներից, կստեղծեին դեմոկրատական պետություն և կկառավարվեին ֆեդերատիվ սկզբունքներով։

Այն ժամանակ, երբ Ռուսաստանում տակավին նոր էին սկսվել ճորտատիրական կարգերի դեմ բարձրացող գյուղացիական շարժումները, դեռ նոր էր կազմավորվում բանվոր դասակարգը, երբ Եվրոպան էր համարվում ռևոլյուցիոն շարժումների կենտրոնը, Մ. Մամուրյանը գրում էր. «Երբ այս ժողովրդային հեղաշրջումը վրիպի, Բաղամականը պիտի զա անվրեպ և Ռուսիան պիտի ալեկոծե, պառակտե։ Կգուշակեմ արդեն այդ հեղափոխության պայմանները... Դեթ ապագային մեջ կերևակայեմ նոր Ռուսիա մը, չէ թե զատ-զատ տերություններու բաժանված, զատ-զատ կառավարությանց ներքև, այլ դաշնակցած Ռուսիա մը՝ ամեն հարստական կապերե ազատ՝ որու այլադեմ ու այլասեռ

[20] Նույն տեղում, 1875, էջ 481։
[21] Նույն տեղում, 1877, էջ 143։
[22] Նույն տեղում, 1878, էջ 33—33։
[23] Նույն տեղում, 1880, էջ 97։

ժողովուրդները ինքնօրինությամբ պիտի վարեն, կառավարեն իրենց հատուկ շահերն տարբերեր օրինաց ու սովորությանց ներքև»[24]:

*Մամուրյանի կանխանշմարած ռուսական ռևոլյուցիան խոշոր փոփոխություններ պիտի մտցներ ոչ միայն ցարական Ռուսաստանում, այլև ողջ Ասիայում ապրող ժողովուրդների, այդ թվում նաև Թուրք ու պարսիկ ժողովուրդների կյանքում։ Այդ ռևոլյուցիայից հետո պետք է ծնվեին նոր ժողովուրդներ, որոնք կկառավարվեին նոր օրենքներով և կապրեին բոլորովին նոր պայմաններում։ «Բայց գիտությունը կայլակերպե բնությունն,—գրում է Մ. Մամուրյանը,—իսկ վայ այն հպատակ և ստրուկ ցեղերուն, որ ազատության ժամը հնչելու ատեն անպատրաստ պիտի գտնվին։ Ռուսական ներքին հեռավոր հեղափոխությունը նախ Ասիան պիտի դղրդե, հրդեհե։ Նոր ժողովուրդներ հին ժողովրդոց հետ պիտի զարնվին և հին աշխարհի բեկորներն իրենց մեջ պիտի բաժանեն։ Այնուհետև արդի ժողովուրդները Թուրք և պարսիկ իրենց անունը կամ օրենքը պիտի փոխեն, նոր աշխարհի մարդիկ կամ հին աշխարհի փարիաներ պիտի մնան և նոր կյանք, նոր օրենք պիտի տիրապետե նորածին ազգերու վրա»[25]։*

*Այսպիսով, «Սև լեռին մարդը» վեպում Մ. Մամուրյանը յուր շոշափած հարցերով և արտահայտած տեսակետներով ցույց է տալիս, որ ինքը կարողանում է նշմարել և ընկալել երկու Ռուսաստանի գաղափարը։ Ատելով ցարական կարգերը, Մամուրյանը սիրում է ռուս ժողովրդին, հավատում նրա ապագային և Ասիայի ժողովուրդների ազատագրման հնարավորությունը տեսնում միայն ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի հետ կապված։*

*Մ. Մամուրյանի այս վեպում արտահայտած բազմաթիվ մտքերն ու տեսակետները ըստ երևույթին նախերգանքը պիտի կազմեին* իր բուն նպատակին՝ ազգային-ազատագրական շարժման ռևոլյուցիոն ուղեգծի մշակման համար՝ հայ ժողովրդի նախապատրաստմանը և ապագա վերածնված Հայաստանի հասարակական ու պետական կարգի կանխորոշմանը: *Դժբախտաբար վեպի երրորդ մասը հրապարակ չեկավ։*

*Կարդալով հոր թղթերում թողած վեպի 3-րդ մասի ուրվագիծը, միաժամանակ վերհիշելով իր հոր պատմածը, Մամուրյան-որդին համառոտակի այսպես է վերապատմում վեպի անավարտ մասի բովանդակությունը. Սև լեռին մարդ Վարուժանը վրացուհի Նուրեմի կողմից փախցվում է Վրաստան և այնտեղ մեծանալով դառնում է ռևոլյուցիոն տրամադրություններով համակված մի մեծ զորախմբի ղեկավար ու վերադառնում Հայաստան։ «Կանցնի շատ ու շատ տարիներ այս դեպքեն վերջ,— գրում է Հրանտը,— երբ պարսկական ու թրքական սահմանագլխին վրա մեծ աղմուկ կհանե երկու կառավարությանց թշնամի, ...խեղճերու և հարստահարված հայ ժողովրդյան բարեբար և բարեկամ հեղափոխական մը, որու համբավը կտարածվի ամբողջ Արարատի վրա». ապա ավելացնում է. «ավազակապետի անվան տակ ծպտված ռևոլյուցիոները» Սև լեռին մարդը՝ Վարուժանն էր, որը ղեկավարում էր հայ-վրացական գունդը և պատրաստվում ազատագրել Արարատը, դատաստան տեսնել հայ ժողովրդի օտար և ազգային հարստահարողների հետ։*

*Հրանտի վկայությամբ, վեպի այս մասում «... հեղինակը իր տեսակետեն դատելով պիտի պատկերացներ* իր ըմբռնումները հեղափոխական զոր-

[24] *Սև լեռին մարդը, էջ 165—166։*
[25] *Նույն տեղում, էջ 165։*

ծունեության և միջոցներու վրա, որոնց վրա ուշադիր ընթերցողը կարող է գաղափար կազմել վեպի ընթացքի մեջ»:

Իրավացի էր Հրանտը։ Առանց վեպի երրորդ մասի էլ, հայտնի են Մամուրյանի «հեղափոխական» կամ ընդհանրապես հայ ազգային-ազատագրական շարժումների ծրագիրը, որոնց իրականացումը անբաժան պետք է լիներին ապագա ռուսական ռևոլյուցիայից։

Ըստ Մամուրյանի՝ ոչ հեռավոր ապագայում Ռուսաստանում, ողջ Ասիայում և գուցե նաև Եվրոպայում կատարվելու էին ռևոլյուցիոն խոշոր հեղաշրջումներ։ Ի՞նչ պետք է աներ հայ ժողովուրդը այդ կարևոր պահին, ահա այս հարցն է, որ հուզում էր հեղինակին և ահա այս էր նրա վեպի կենտրոնական խնդիրը։ «Այս քաղաքական ալեկոծության ժամանակ,—գրում է նա,— հայկական նավն, Սոյան նոր տապանն, ուր պիտի կենա այս անգամ, պիտի գտնե Մասիս մը, թե ոչ պիտի սուզի անկանգնելի կերպով ժողովրդոց անդունդին մեջ։ Այս է մեզի համար կարևորը, և այս կախում ունի ներկայիս մեջ մեր բռնելիք ընթացքեն։ Իմ բուն նպատակս այդ ընթացքին ուղղություն տալն էր, հայր այդ մեծ և բազմահույզ ապագային պատրաստելն էր»[26]։

Ինչպես հրապարակախոսական բնույթի մյուս բոլոր գործերում, այնպես էլ իր վեպում, Մ. Մամուրյանը ձգտում է հայ ժողովրդի նախապատրաստմանը «այդ մեծ դատին»՝ համընդհանուր ռևոլյուցիայի մեծ արարքին։ Հրապարակախոսը գտնում էր, որ հարկավոր է կրթել, լուսավորել հայ ժողովրդին, նրա մեջ զարգացնել հայրենասիրության պաթոս, օտար բռնակալների դեմ մարտնչելու «անհագ կիրք»։ Վեպում մեծ տեղ է տրվում նաև ժողովրդի տնտեսական զարգացման խնդիրներին։ Մամուրյանի կարծիքով հարկավոր է երկրում զարգացնել մեքենայական արտադրություն, մեքենայացնել գյուղատնտեսությունը, զարկ տալ «ազգային առևտրին» (ի դեպ, այս կետերում ևս զգալի է «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության ազդեցությունը), կառուցել նոր քաղաքներ, լավացնել հաղորդակցության ճանապարհները, անցկացնել երկաթգծեր, քաղաքներում «տրամվայներ... երկաթի գործարաններ, արհեստանոցներ հաստատել... գլխավոր քաղաքներու մեջ դպրոցներ, տպարաններ, թերթեր հիմնել, գյուղերու մեջ վարժարաններ բանալ...»։ Տնտեսական ժամանակի իմաստով այս հսկա «հեղաբեկման» իրականացման համար հարկավոր էին միայն «աշխատություն», «հարատևություն» և «միություն»։ Տնտեսական զարգացումից, կրթվելուց, լուսավորվելուց հետո պետք է զինել հայ ժողովրդին. «Սուր մտքին պետք է միանա կտրուկ թուրը,—գրում է Մամուրյանը,— այդ թուրն անոր ձեռքը տալու ելա այս անգամ, որ քիչ մը վարժի... քանզի իմ շուրջս միայն խաղաղություն և հանդարտություն ցանկացող ոչխարներ կտեսնեմ, որոնք ավելի կսիրեն խուզվել քան թե խուզել»։

Հայ ժողովուրդը զինված ապստամբության միջոցով պետք է թոթափեր ոչ միայն սուլթանական, այլ նաև ցարական լուծը, յուր ճակատի վրայից մաքրեր անցյալի «մրի հետքերը» և ապացուցեր, որ ինքը ոչնչով հետ չի մնում մյուս ժողովուրդներից։ «Վատության այդ ախտը սրբելու համար,—շարունակում է Մ. Մամուրյանը,—արյան հեղեղներ պետք են»։

Վեպում որոշակի տեղ է գրավում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դաղափարախոսությունը։ Հավատարիմ յուր սկզբունքներին,

---

[26] Նույն տեղում, էջ 165—166:

Մ. Մամուրյանը վեպի երկրորդ մասի շարադրումից իսկ սկսում է հայ և վրաց ժողովուրդների, այդ թվում նաև, ինչպես տեսանք, թուրք և պարսիկ ժողովուրդների նախապատրաստությունը ազգերի ազատագրական համընդհանուր պայքարին։ Այնպիսի կերպարներ են ստեղծվում, որոնց գործելակերպին տեղյակ ընթերցողը չի կարող չմտահոգվել ժողովրդի բախտով, չոգևորվել այդ հերոսների գործունեությամբ, չձգտել խտացնելու նրանց շարքերը։

Մամուրյանը գտնում էր, որ ազատագրական շարժման հաղթանակի ամենակարևոր գրավականը միասնականությունն է. «...Եթե իմ բազուկիս ու սրտիս պես հազարների բազուկներ ու սրտեր նվիրվեին քեզ,—գրում է նա,—այդ չափ արյունալի չպիտի տեսնեի արևդ, չպիտի լսեի այն արձագանքն որ լեռե լեռ ու ձորե ձոր ողբ ու կոծդ կկրկնեն»։

Այս և հարանման բազմաթիվ փաստերից ակնհայտ է, որ Մ. Մամուրյանը 1880-ական թվականներին ևս զինված ապստամբության միջոցով էր լուծում ոչ միայն ռուս և վրաց ժողովուրդների, այլև հայ ժողովրդի ազատագրման հարցը։ Վեպի ամենաարժեքավոր կողմերից մեկն էլ այն է, որ Մամուրյանը առաջադրում է հայ և վրացի ժողովուրդների ռևոլյուցիոն դաշինքի հարցը։ Վրացուհի Նուրեմը, ազատատենչ կնոջ այդ անմեռ կերպարը, այն զորեղ կամուրջն էր, որը պետք է Արարատը կապեր Կովկասյան լեռնաշղթայի հետ, «Հայաստանը Վրաստանի հետ», «Արաքսը Քուռի հետ»։ Մ. Մամուրյանի հերոսի՝ Սև լեռին մարդու՝ Վարուժանի դաստիարակն ու հոգևոր սնունդ տվող այդ վրացուհին դիմելով յուր երբեմնի նիզակակիցներին, իսկ նրանց միջոցով հայ ժողովրդին, ասում էր. «Անբաժան պիտի մնամ... Հայաստանեն, որ իմ կենացս քնքուշ ծաղիկն առավ, և փոխարեն ինձ տվավ վարդ մը փշալից... որով Կովկասու սարերն օրին մեկը Արարատա սարերուն հետ պիտի կապե, ինչպես որ երբեմն Հայկազունք արենակցությամբ և քաղաքականությամբ կապված էին իմ լեռնցի նախահարցս հետ, որ ասիական ամեն տեսակ բռնակալությանց մեջ ազատության կոթողն իրենց շքեղ լեռներուն պես կանգուն պահեցին և անոնց նոր սերունդն, որ ցարդ կմաքառի հսկա տերության մը դեմ՝ անշուշտ պիտի հաջողի՝ երբ մերը ընդ մերը ընկճի ու մատնվի անգամ Ասիո ամենե կորովի և ազատ ժողովուրդը դառնալ՝ Արարատյան ժողովրդոց հետ միանալով... ապագա դեպքեր ու պարագաներ կհուսամ որ պիտի հաստատեն»[27]։ Բավական է հիշատակել այն փաստը, որ ապագա հեղափոխականը, «Հայերի փրկության հույսը»՝ Սև լեռին մարդը կրթություն և դաստիարակություն էր ստացել Վրաստանում, այնտեղ կազմակերպել յուր «արիական գունդը», որի մեջ մտնում էին եղբայրական կապերով իրար հետ նիզակակցած հայեր և վրացիներ։ Մամուրյանը ոչ միայն հեռու էր ազգային նեղմտությունից, այլ ազգերի եղբայրական կապերի կողմնակից էր, կապեր, որոնք պիտի կոփվեին ազատագրական համընդհանուր պայքարում։ Վեպում շոշափվում է նաև կանանց խնդիրը։ Այս հարցում ևս Մամուրյանը ոչ միայն ընկալում, այլև զարգացնում էր Նալբանդյանի մտքերը։ Վիպասանի տեսակետները այս խնդրի կապակցությամբ առավել արմատական էին դարձել։ 1860-ական թվականներին գրված «Անգղիական նամականիի» հերոսուհի, ազգի կրթության ու լուսավորության գործին նվիրված, բարեփոխությունների սիրահար Լիլիին, այստեղ գալիս են փոխարինելու վրացուհի Նուրեմը և Ջորայի կին Նվարդը։

[27] Նույն տեղում, էջ 309—310։

Նուրեմը հայրենիքի համար մղվող պայքարում քաջարի զինվոր է, ճարպիկ ու բանիմաց, ուժեղ ու կորովի. ազնիվ, որի ունեցած բոլոր հատկանիշների կոմպլեքսը նրան դարձնում են իդեալական կերպար հայ և վրացի կանանց համար։ Ազնիվ լինելուն զուգընթաց, Նուրեմը վրեժխնդիր է։ Նա ատում է դավաճաններին (Հերենց), մատնիչներին և հայրենիքի համար պայքարելն ու մեռնելը իդեալ է նրա համար։ Բարոյական հարցերում վրիժառու էր Նուրեմը։ Նա ատում էր բոլոր նրանց, ովքեր չէին հարգում կնոջ առաքինությունը, չէին դնահատում նրա անկեղծ ու անկաշառ սերը։

Մամուրյանը արժանիքներով է զարդարել նաև իր մյուս հերոսուհուն՝ Նվարդին։ Նվարդի բերանով վիպասանը զենքի է կոչում հայ կանանց, որպեսզի, եթե ոչ Հայաստանն ազատագրեն, գեթ կարողանան պաշտպանել իրենց։ «Տվեք ինձ որդուս զենքերը,— պահանջում է Նվարդը,— ես ալ կարող եմ, եթե ոչ ձեզ՝ ինքզինքս պաշտպանել և չեմ ուզեր կարծել տալ, որ եթե ոչ առնական, բարոյական քաջություն չունին հայ կանայք։ Այս է իմ փափաքս և հուսամ, որ չեք զլանար ինձ ձեզի հետ կռվելու պատիվը...»։

Հայ կանանց խնդիրը պետք է լիներ՝ ոգևորել իրենց ամուսիններին, նրանց պայքարի հանել ազգի ազատության համար, իրենք ևս անմասն չմնալով այս պայքարից։ «Եթե ես այր լինեի,— ասում է Մամուրյանի հերոսուհին,— ես ալ բանտ, շղթա, աքսոր, մահս անգամ աչքս կառնեի, որպեսզի հայրենի պարտքս կատարեմ, սակայն Զորա անիրավ է, եթե կարծե, թե Նվարդը բավական արիություն չունի իրեն բախտակից լինելուն»։ Այսպիսով, կինը այս վեպում ոչ միայն գորովագութ մայր է, ժողովրդի լուսավորության գործին նվիրված ուսուցիչ, այլև արիասիրտ, ազատագրական պայքարի դրոշի ներքո մարտնչող մի զինվոր։

Վեպի լեզուն հղկված, մշակված աշխարհաբար է, ոճը հարթ է ու սահուն։ Ընթերցողը գեղարվեստական հաճույք է ստանում այդ վեպից, լարված կերպով հետևում դեպքերի ընթացքին։ Հեղինակը որպես գեղարվեստական հնարանք, օգտագործում է վեպում կատարվող ողջ իրադարձությունները մեկ կամ երկու մարդու միջոցով պատմելու ձևը։ Այս տեսակետից «Սև լեռին մարդը» վեպի վրա զգացվում է Վալտեր Սկոտի, հատկապես «Իվանոեի» ազդեցությունը։

Սակայն կրկնում ենք, որ մեզ այստեղ ավելի քան զբաղեցրել է «Սև լեռին մարդը» վեպի գաղափարական կողմը և նրա հեղինակի առաջադրած ծրագրերի հետագա իրականացման հնարավորության խնդիրը։ Այս տեսանկյունից նայելով, չպետք է մոռանալ, որ Մ. Մամուրյանի գործը գրվել է մի ժամանակ, երբ Արևմուտքում ու Ռուսաստանում արդեն հանդես են եկել հեղինակի հուզող գաղափարների անդրանիկ մունետիկները և սակայն դեռ չէին դարձել մասսայական լայնահուն շարժման պարագլուխներ։ Վեպի մեջ ձևակերպված առաջավոր մտքերի ու տրամադրությունների ընկալման ու տարածման համար Առաջավոր ասիական իրականությունը, այդ թվում նաև արևմտահայ միջավայրը դեռ չէր հասունացրել նպաստավոր պայմաններ։ Իր շրջադրության մեջ հեղինակը դեռ չէր նշմարել դասակարգային շարժիչ այն ուժերը, որոնց վրա հենված, նա պիտի կարող լիներ արդասավոր պայքար սկսել իր դավանած գաղափարների կենսագործման համար։ Այդ է հենց պատճառը, որ վեպի հերոսները հանդես են գալիս սոսկ հեղինակին սպասարկող ձայնափողերի

գերում, բայց դեռ չեն հանդիսանում գեղարվեստական համոզիչ կերպարներ, իրական ու կենդանի պերսոնաժներ։

Գեղարվեստական արժանիքներից առավել անհամեմատ ավելի նշանակալից են վեպի գաղափարական արժանիքները։ Ուտոպիստական իր երանգներով հանդերձ, Մամուրյանի վեպը դրսևորում է հեղինակի հասարակական առաջավոր դավանանքը, նրա զարմանալի պայծառատեսությունը, նրա շատ սկզբունքների բացառիկ ճշմարտությունը։ Գրական ուշագրավ երկ լինելուց առավել, «Սև լեռին մարդը» XIX դարի 70-ական թվականների հայ դեմոկրատական մտքի պատմության նշանավոր մի հուշարձան է։